

COVID-19 վարակի հետ շփումների կառավարման ծրագրի ուղեցույց Նախադպրոցական խնամքի և Կրթական Հաստատությունների համար

Ծանոթություն. այս փաստաթուղթը հաճախակի թարմացվում է: Խնդրում ենք ստուգել կայքէջում նշված ամսաթիվը՝ վերջին տարբերակի համար:

Վերջին թարմացումները (փոփոխությունները նշված են դեղին գույնով)

12/19/2022

- Թարմացվել են հորդորներն այն մասին, թե սերտ շփում ունեցած անձինք, որոնք վերջերս են ունեցել COVID-19-ի վարակ (այսինքն՝ վերջին 90 օրվա ընթացքում) և չունեն ախտանիշներ, երբ պետք է շփումից հետո թեստավորվեն:

10/27/2022

- Այլևս չի պահանջվում հայտնել Նախադպրոցական խնամքի և Կրթական Հաստատություններում COVID-19-ով վարակման առանձին դեպքերի մասին: Այսուհետ՝ 14 օրվա ընթացքում կապակցված յուրաքանչյուր 3 կամ ավելի դեպքերով խմբակային վարակման մասին պետք է անմիջապես հայտնել Հանրային Առողջության Վարչությանը և ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- Հստակեցվել են վարակի հետ սերտ շփումների սահմանումները՝ փակ օդային տարածքով ընդարձակ վայրերի վերաբերյալ Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության (CDPH) դասակարգումները ներառելու համար: Մեկ հարկում 400,000 խորանարդ ոտնաչափից ավել փակ օդային տարածքով վայրերում սերտ շփում ունեցած են համարվում այն անձինք (աշխատակիցներ և երեխաներ), որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձից գտնվել են մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավելի ժամանակով: 400,000 խորանարդ ոտնաչափ (մեկ հարկում) կամ ավելի փոքր փակ օդային տարածքով վայրերում սերտ շփում ունեցած երեխաներ են համարվում՝ 1) նրանք, որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձից գտնվել են մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավելի ժամանակով: Աշխատակիցների դեպքում սերտ շփում ունեցածների ճանաչելու համար պետք է կիրառել 400,000 խորանարդ ոտնաչափ կամ ավելի փոքր (մեկ հարկում) փակ օդային տարածքով վայրերի՝ ընդհանուր օդային տարածք սահմանումը՝ համաձայն Cal/OSHA ուղեցույցների:

Հանրային առողջության թիրախավորված արձագանքը, որն ուղղված է համայնքներում COVID-19-ով վարակված անձանց հետ շփումների սահմանափակմանը, կարող է օգնել առավելագույնի հասցնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ COVID-19-ի արձագանքի ազդեցությունը:

Նախադպրոցական իսկամբ և Կրթություն (ECE) Տրամադրողները համայնքի վստահված գործընկերներն են, որոնք կարող են օգնել Հանրային Առողջության Վարչությանը բարելավել Հանրային Առողջության արձագանքի ժամկետներն ու ազդեցությունը՝ COVID-19-ով վարակված անձանց հետ «Շփումների կառավարման ծրագիրը» (EMP) արագ մշակելու միջոցով: Նախադպրոցական իսկամբի և Կրթության Հաստատությունում COVID-19-ով վարակման մեկ դեպքի հայտնաբերումից հետո «Շփումների կառավարման ծրագիրն» անհապաղ իրագործելը կարող է արագացնել COVID-19-ի տարածման զսպումը և կանխարգելել այդ մեկ դեպքի՝ տվյալ վայրում բռնկում դառնալը:

Նախադպրոցական իսկամբի և Կրթության Հաստատություններում (ECE) COVID-19-ով վարակված 1, 2 և 3 կամ ավելի անձանց հետ շփումների կառավարման քայլերը նկարագրված են ստորև և ամփոփված են «Հավելված Ա»-ում: Քանի որ Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատությունները կունենան COVID-19-ի վարակակրի հետ շփումների կառավարման միջոցների տարբեր ծավալ, *պահանջվող* քայլերն այն նվազագույնն են, որ պետք է ընդգրկված լինեն «Շփումների կառավարման ծրագիրը»-ում: *Խորհուրդ տրվող* քայլերն ընդգրկում են շփումները կառավարելու ընտրովի գործողություններ, եթե կենտրոնի միջոցները բավարարում են:

Նկատի ունեցեք, որ «կենտրոններին», «հաստատություններին» կամ «վայրերին» արված բոլոր հղումները վերաբերում են բոլոր երեխաների իսկամբով զբաղվողներին, ներառյալ երեխաների ընտանեկան իսկամբի տների մատակարարներին: «Դեպք» (վարակված անձ) եզրույթը վերաբերում է Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատության հետ կապ ունեցող այն անձին, որը վարակված է COVID-19-ով: Երբ սույն փաստաթուղթը գործողության կոչ է անում հաստատությանը վերջինիս տարածքում վարակման հաստատված դեպքի առիթով (օրինակ՝ տրամադրել ցուցումներ), ապա «դեպք» ասելով պետք է հասկանալ անձնակազմի վարակված անդամ կամ վարակված երեխայի ծնող (կամ ինամակալ/հոգաբարձու): ECE կենտրոնների համար լրացուցիչ աղբյուրներ կարելի է գտնել [«Նախադպրոցական իսկամբի և կրթական հաստատությունների COVID-19-ի գործիքակազմ»](#)-ում:

Շփումների կառավարման ծրագրումը՝ նախքան COVID-19 -ով վարակման 1 դեպք հայտնաբերելը Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատությունում

- ❑ *Պահանջվում է:* Ունենալ Նախադպրոցական իսկամբի և Կրթության Կենտրոններում (ECE) COVID-19-ի հարցերով հատուկ նշանակված Կապի Անձ (Liaison), որը կծառայի որպես կապ ապահովող անձ՝ COVID-19-ի հետ կապված անվտանգության արձանագրությունների (protocols) համար: Նշանակված անձը կապահովի, որ անձնակազմը, ընտանիքներն ու երեխաները ստանան տեղեկություն COVID-19-ի վերաբերյալ, և կծառայի որպես Հանրային Առողջության Վարչության հետ կապ ապահովող անձ՝ հաստատության մակարդակով տեղեկություններ տարածելու համար, որը կթեթևացնի Հանրային Առողջության գործը:
- ❑ *Պահանջվում է:* Ունենալ ծրագիր, համաձայն որի COVID-19-ի թեստավորման հնարավորություն կունենան կամ կթեստավորվեն բոլոր այն երեխաները, աշխատակիցները, այցելուները և երեխաների ընտանեկան իսկամբի հաստատության անդամները, ովքեր՝ (1) ունեն COVID-19-ին համապատասխան ախտանիշներ, (2) կենտրոնում շփվել են վարակի հետ կամ (3) գտնվում են այն կենտրոնում, որտեղ Հանրային Առողջության Վարչությունը անցկացնում է ակտիվ քննություն:
- ❑ *Պահանջվում է:* Ունենալ զեկուցելու ծրագիր՝ Հանրային Առողջության Վարչությանը (DPH)

Երեխաների կամ աշխատակիցների շրջանում COVID-19-ի հետևանքով հոսպիտալացումների և/կամ մահվան բոլոր դեպքերի մասին հայտնելու համար՝ [ACDC-Education@ ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով:

- ❑ **Խորհուրդ Է տրվում:** Նախադպրոցական հսկման և Կրթական (ECE) հաստատություններին, որոնք կորոշեն իրականացնել ախտանիշների ստուգման ծրագիր, խորհուրդ Է տրվում կիրառել Հանրային Առողջության Վարչության (DPH) «Ախտանիշների և վարակման հետ կապված [որոշումների ուղեցույց](#)» այն անձանց դեպքում, որոնք դեռևս COVID-19-ի թեստ չեն հանձնել, սակայն որոնց ախտանիշների ստուգման արդյունքը դրական է եղել նախքան ECE հաստատություն մտելը կամ հաստատությունում գտնվելիս:

Շփումների կառավարումը Նախադպրոցական հսկման և Կրթական Հաստատությունում COVID-19-ով վարակման դեպքում

- ❑ **Պահանջվում է:** COVID-19-ով վարակման 1 դեպք հայտնաբերելուց հետո Նախադպրոցական հսկման և Կրթության (ECE) Մատակարարը պետք է կարգադրի տվյալ անձին հետևել COVID-19-ով վարակվելու դեպքում Տնային Մեկուսացման Հրահանգներին՝ (ph.lacounty.gov/covidisolation): ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵԹ՝ COVID-19-ի հաստատված վարակով անձ է համարվում այն անձը, որի COVID-19-ի թեստի արդյունքը դրական է: Տե՛ս [մեկուսացման հրահանգների ծանուցման օրինակը](#) (հրապարակված՝ ph.lacounty.gov/EducationToolkit/ECE կայքէջում)՝ որպես կիրառելի օրինակ:

- COVID-19-ով վարակված երեխաները (բոլոր տարիքի) և աշխատակիցները կարող են ավարտել մեկուսացումը 5-րդ Օրվանից* հետո և վերադառնալ հաստատություն 6-ից 10-րդ Օրերի ընթացքում, ՄԻԱՅՆ եթե բավարարվում են հետևյալ բոլոր չափանիշները. 1. 5-րդ Օրը կամ ավելի ուշ հանձնած COVID-19-ի վիրուսային թեստի** արդյունքը բացասական է, և 2. Առնվազն 24 ժամ ջերմության բացակայություն առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման, և 3. Մյուս ախտանիշները բարելավվում են, -կամ- մեկուսացումը կարող է ավարտվել 10-րդ Օրվանից հետո, եթե առանց դեղեր օգտագործելու առնվազն 24 ժամ ջերմություն չի եղել:

*Ախտանիշներ ունեցող երեխաների և աշխատակիցների համար Օր 0-ն ախտանիշների ի հայտ գալու առաջին օրն է, 1-ին Օրը ախտանիշների ի հայտ գալուն հաջորդող առաջին ամբողջական օրն է: Ախտանիշներ չունեցող (ասիմպտոմատիկ) երեխաների և աշխատակիցների համար Օր 0-ն դրական արդյունքով թեստը հանձնելու օրն է, 1-ին Օրը դրական արդյունքով թեստը հանձնելուն հաջորդող առաջին ամբողջական օրն է:

**Թեստը պետք է լինի FDA-ի կողմից թույլատրված վիրուսային թեստ (օրինակ՝ ՊՇՌ (PCR) կամ Հակագենի (Antigen) թեստ, ներառյալ տնային պայմաններում արվող թեստերը): Մեկուսացումից դուրս գալու համար նախընտրելի է հակագենի թեստը:

- **ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Համաձայն Cal/OSHA-ի՝ [COVID-19-ի Կանխարգելման Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Հափանիչների](#) (ETS)՝ գործատուներից պահանջվում է կատարել հետևյալը անձնակազմի համար. տեղեկացնել բոլոր աշխատակիցներին, թե ինչպես կարող են թեստավորվել, առաջարկել նրանց անվճար թեստավորում և թեստավորում վճարվող ժամերին և թեստավորել այնպես, որ ապահովվի աշխատակիցների գաղտնիությունը: ETS-ի թեստավորման պահանջներին համապատասխանելու համար COVID-19-ի ազատ վաճառվող (OTC) թեստով կարելի է ինչպես ինքնուրույն թեստավորվել, այնպես էլ արդյունքն ինքնուրույն կարդալ, եթե ներկայացվում են հաստատված արդյունքներ, ինչպիսիք են թեստի արդյունքի լուսանկարը, որի վրա նշված է օրն ու ժամը, կամ ազատ վաճառվող թեստ, որը թվայնացված տարբերակով արձանագրում է թեստի արդյունքի օրն ու ժամը: Բացի այդ, աշխատակիցները կարող են գործատուից պահանջել դիմակներ և

շնչառական միջոցներ (respirator), որոնք իրենց համար անվճար են: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [«Կրիո դիմակ և իմացիո քո իրավունքները»](#):

- Եթե երեխան բավարարում է 5-րդ Օրվանից հետո մեկուսացումից դուրս գալու չափանիշները, ապա 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին **խստորեն հորդորվում է** 10 օր շարունակել կրել [լավ պաշտպանող դիմակ](#)՝ իրենց դրական արդյունքով թեստից հետո (կամ ախտանիշների առաջանալուն հաջորդող առաջին ամբողջական օրվանից հետո): COVID-19-ով վարակված աշխատակիցներից **պահանջվում է** կրել լավ պաշտպանող դիմակ աշխատավայրում այլ անձանց շրջապատում գտնվելիս՝ բացառությամբ ուտելիս կամ խմելիս, ախտանիշների սկսվելու օրվանից սկսած 10 օր (իսկ ախտանիշների բացակայության դեպքում՝ թեստի դրական արդյունքի օրվանից հետո 10 օր):
- ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Կան որոշ մարդիկ, որոնք չպետք է դիմակ կրեն, օրինակ՝ 24 ամսականից փոքր երեխաները, որոշակի առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք և նրանք, որոնց բուժաշխատողը կարգադրել է չկրել դիմակ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է դիմակ կրեն միայն մեծահասակների հսկողությամբ: Տե՛ս՝ [«Ուլքեր չպետք է դիմակ կրեն»](#) և [«Հատուկ նկատառումներ հաղորդակցման դժվարություններ կամ որոշակի հաշմանդամություն ունեցող անձանց համար»](#):

☐ **Պահանջվում է:** Նախադպրոցական ինսամբի և Կրթական Կենտրոնի COVID-19-ի Կապի Անձի աշխատանքն է պարզել, թե ուլքեր են բոլոր այն անձինք, որոնք կենտրոնում շփվել են COVID-19-ի հաստատված վարակ ունեցող անձի հետ, երբ նա եղել է վարակող (սերտ շփում):

- Վարակված անձը համարվում է վարակող ախտանիշների ի հայտ գալուն նախորդող 2-րդ օրվանից մինչև իր մեկուսացման ավարտը՝ ինչպես ներկայացված է «COVID-19-ի տնային մեկուսացման հրահանգներ»-ում (ph.lacounty.gov/covidisolation): COVID-19-ի թեստի դրական արդյունք ունեցող անձը, որը չունի ախտանիշներ, համարվում է վարակող թեստը հանձնելուն նախորդող 2-րդ օրվանից մինչև իր մեկուսացման շրջանի ավարտը:
- Սերտ շփում ունեցած անձ՝ կոնտակտավոր: Համարվում է, որ անձինք շփվել են վարակակրի հետ (սերտ շփում ունեցած անձ) վերջինիս վարակող եղած ժամանակ, եթե՝

Մեկ հարկում 400,000 խորանարդ ոտնաչափ տարածությամբ կամ ավելի փոքր փակ օդային տարածքով վայրերում: Նրանք 24 ժամվա ընթացքում վարակված անձի (դեպք) հետ գտնվել են կենտրոնի միևնույն փակ օդային տարածքով վայրում ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավելի ժամանակով՝ վարակված անձի վարակող եղած ժամանակ: Սա **նախընտրելի** սահմանումն է Նախադպրոցական ինսամբի և Կրթական Հաստատություններում հավելյալ փոխանցումը հնարավորինս սահմանափակելու համար և խստորեն խորհուրդ է տրվում դասարաններում և նման տարածությամբ փակ վայրերում երեխաների սերտ շփումները հայտնաբերելու համար: Փակ օդային տարածքով վայրի այս ընդհանուր սահմանումը պետք է կիրառվի աշխատակիցների սերտ շփում ունեցածների անձը պարզելու համար՝ համաձայն Cal/OSHA-ի ETS-ի ([COVID-19-ի Կանխարգելման Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշներ](#)):

- Որպես այլընտրանք՝ Նախադպրոցական ինսամբի և Կրթական Հաստատությունները կարող են սահմանափակել երեխաների սերտ շփումների սահմանումն այն երեխաներով, որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձից գտնվել են մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավելի ժամանակով և կարող են կիրառել այս սահմանումը բոլոր հաստատություններում՝ ներառյալ դասարաններում:

Մեկ հարկում 400,000 խորանարդ ոտնաչափից ավելի փակ օդային տարածքով

վայրերում: Նրանք 24 ժամվա ընթացքում վարակված անձից (դեպք) գտնվել են մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա ընդհանուր 15 րոպե կամ ավելի ժամանակով՝ վարակված անձի վարակող եղած ժամանակ: Սա վերաբերում է ինչպես սերտ շփում ունեցած երեխաներին, այնպես էլ աշխատակիցներին: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. այն տարածքները, որոնք բաժանված են հատակից մինչև առաստաղ պատերով (օրինակ՝ գրասենյակներ, սենյակներ, ընդմիջման/սնվելու տարածքներ՝ առանձնացված հատակ-առաստաղ պատերով) համարվում են առանձին փակ օդային տարածքով վայրեր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատության բացօթյա տարածքում վարակի հետ շփված անձիք չեն համարվում սերտ շփում ունեցած անձ:

❑ **Պահանջվում է:** Այն անձիք, որոնց մասին հայտնի է, որ տվյալ հաստատության տարածքում շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ (սերտ շփում ունեցած անձիք), Նախադպրոցական իսկամբ և Կրթություն Տրամադրողի կողմից ծանուցվում են վարակի հետ շփման մասին և տեղեկացվում են ձեռնարկվելիք քայլերի մասին:

- Ծանուցումները կարող են արվել անհատական ծանուցման կամ խմբակային ծանուցման միջոցով, որի շրջանակում անձանց կհայտնեն վարակի հետ իրենց շփման և պահանջվող գործողությունների մասին: Տե՛ս COVID-19-ի ծանուցման նամակների ձևանմուշները Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատությունների համար, որոնք կարող են օգտագործվել այս ծանուցման դեպքում (հրապարակված է ph.lacounty.gov/EducationToolkitECE կայքէջում):

- Եթե կիրառվում է 24 ժամվա ընթացքում վարակված անձից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավելի ժամանակով գտնվելու սահմանումը՝ 400,000 խորանարդ ոտնաչափ կամ ավելի փոքր տարածքով վայրերում (օրինակ՝ դասասենյակներ կամ նմանատիպ տարածությամբ վայրեր) վարակի հետ սերտ շփում ունեցած երեխաներին հայտնաբերելու համար, մյուս բոլոր երեխաները, որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձի հետ գտնվել են միևնույն փակ օդային տարածքով վայրում 15 րոպե կամ ավելի ժամանակով, պետք է տեղեկացվեն վարակի հետ հնարավոր շփման մասին, և նրանց պետք է ներկայացնել առաջարկվող ձեռնարկվելիք գործողությունները: Տե՛ս COVID-19-ի մասին ծանուցման նամակների ձևանմուշները՝ Նախադպրոցական իսկամբի և Կրթական Հաստատությունների ձևանմուշների օրինակի համար, որոնք կարող են կիրառվել այս ծանուցման դեպքում (հրապարակված է ph.lacounty.gov/EducationToolkitECE կայքէջում):

Գործողություններ սերտ շփում ունեցած անձանց համար

- Սերտ շփում ունեցած, ախտանիշներ չունեցող անձանցից չի պահանջվում կարանտին պահպանել. նրանք կարող են մնալ հաստատությունում, եթե հետևում են [սերտ շփում ունեցած անձանց բոլոր պահանջներին](#), մասնավորապես՝ (1) հետևում են՝ արդյոք ախտանիշներ առաջանում են, (2) եթե 2 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի*, փակ տարածքներում ուրիշների շրջապատում գտնվելիս կրում են [լավ պաշտպանող դիմակ](#) վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր՝ բացառությամբ ուտելիս, խմելիս կամ քնելիս, (3) թեստավորվում են FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի վիրուսային թեստով (օրինակ՝ ՊՇՌ կամ հակազենի թեստ, ներառյալ տնային թեստերը) վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում:**

- Եթե կիրառվում է 24 ժամվա ընթացքում վարակված անձից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավելի ժամանակով գտնվելու սահմանումը՝ 400,000 խորանարդ ոտնաչափ կամ ավելի փոքր տարածքով վայրերում (օրինակ՝ դասասենյակներ կամ նմանատիպ տարածությամբ վայրեր) վարակի հետ սերտ շփում ունեցած երեխաներին հայտնաբերելու համար, բոլոր մյուս երեխաներին, որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձի հետ գտնվել են միևնույն փակ օդային տարածքում, հորդորվում է (1) հետևել՝ արդյոք ախտանիշներ առաջանում են, (2) կրել [լավ պաշտպանող](#)

դիմակ փակ տարածքում այլ անձանց շրջապատում գտնվելիս, եթե 2 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի* բացառությամբ ուտելիս, խմելիս կամ քնելիս, վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 10 օրվա ընթացքում (3) թեստավորվել FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի դեմ վիրուսային թեստով (օրինակ՝ ՊՇՌ կամ հակազենի թեստ, ներառյալ տևային թեստերը) վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում:**

***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Կան որոշ մարդիկ, որոնք չպետք է դիմակ կրեն, օրինակ՝ 24 ամսականից փոքր երեխաները, որոշակի առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք և անձինք, որոնց բուժաշխատողը կարգադրել է դիմակ չկրել: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է դիմակ կրեն միայն մեծահասակների հսկողությամբ: Տե՛ս՝ [«Ովքեր չպետք է դիմակ կրեն»](#) և [«Հատուկ նկատառումներ հաղորդակցման ռժվարություններ կամ որոշակի հաշմանդամություն ունեցող անձանց համար»](#):

****ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Ախտանիշներ չունեցող սերտ շփում ունեցած անձինք՝ երեխա/աշակերտ և աշխատակից, որոնք նախկինում վերջին 90 օրվա ընթացքում, վարակված են եղել SARS-CoV-2-ով, ազատվում են **շփումից հետո** թեստավորման **պահանջից**, սակայն պետք է դիմակ կրեն այլ անձանց շրջապատում գտնվելիս վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր, եթե 2 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի: Ախտանիշներ չունեցող սերտ շփում ունեցած անձանց, որոնք վերջերս են ապաքինվել COVID-19 վարակից, խորհուրդ է տրվում թեստ անցկացնել շփումից 3-5 օր հետո, եթե նրանց նախորդ վարակը եղել է ավելի քան 30 օր առաջ (այսինքն՝ առաջին դրական արդյունքով թեստի ամսաթիվը եղել է 31-90 օր առաջ): Պետք է օգտագործել հակազենային թեստ, որը մեջ են մտնում տևային թեստերը: Եթե նրանց նախորդ վարակը եղել է վերջին 30 օրվա ընթացքում (այսինքն՝ առաջին դրական արդյունքով թեստը եղել է 1-30 օր առաջ), ապա թեստավորումը խորհուրդ չի տրվում: Մանրամասների համար տե՛ս՝ [«Հրահանգներ COVID-19-ի հետ սերտ շփում ունեցածների համար»](#):

- **Նորածին և մինչև 2 տարեկան (կամ 24 ամսականից փոքր) երեխաները չպետք է դիմակ կրեն:** Մինչև 2 տարեկան երեխաները, որոնք սերտ շփում են ունեցել վարակի հետ և չունեն ախտանիշներ, կարող են մնալ հաստատությունում, եթե նրանց ախտանիշները վերահսկվում են և նրանք վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում թեստավորվում են FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի վիրուսային թեստով:
- 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները, որոնք ազատված են դիմակ կրելու պահանջից* և շփվել են վարակի հետ, պետք է կրեն կզակը ծածկող կտորով դեմքի վահան, եթե նրանց առողջական վիճակը թույլ է տալիս: 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները, որոնք ի վիճակի չեն դիմանալ դիմակին կամ կզակը ծածկող կտորով դեմքի վահանին, կարող են մնալ հաստատության տարածքում, եթե՝ 1) նրանց մոտ ախտանիշներ չեն առաջանում, 2) վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր հետևում են՝ արդյոք ախտանիշներ առաջանում են, և 3) վարակի հետ վերջին շփումից հետո 10 օրվա ընթացքում երկու անգամ թեստավորվում են COVID-19-ի համար. առաջին անգամ՝ 3-5-րդ և երկրորդ անգամ՝ 6-9-րդ օրերի ընթացքում: 2 տարեկան և ավելի մեծ երեխաները, որոնք չեն կարող դիմակ կրել վարակի հետ շփվելուց հետո և չեն կարող բավարարել այս պահանջները, պետք է մասն տանը վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր:

* 2 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք կարող են ազատվել դիմակ կրելուց հետևյալ պատճառներով (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս՝ [«Նախադպրոցական կրթություն տրամադրողներին ուղղված պահանջների ուղեգույցը և լավագույն գործողությունները»](#)).

- Անձինք, ովքեր ունեն լսողության խանգարում կամ շփվում են լսողության խանգարում ունեցող անձի հետ, երբ բերանը տեսնելու հնարավորությունը կարևոր է հաղորդակցության համար:

- Ֆիզիկական կամ հոգեկան առողջական խնդիր կամ հաշմանդամություն ունեցող անձինք կամ այն անձինք, ում բուժաշխատողը որոշել է, որ նրանց համար անվտանգ չէ դիմակ կրելը, կարող են ներկայացնել դիմակ կրելուց ազատվելու դիմում իրենց Նախադպրոցական ինսամբի կամ Կրթության Հաստատություն: Նահանգի կողմից արտոնագրված բուժաշխատողի կողմից տրամադրված վկայագիրը, որը հաստատում է, որ երեխան ունի այնպիսի առողջական խնդիր կամ հաշմանդամություն, որը խոչընդոտում է նրան անվտանգ դիմակ կրել, կընդունվի որպես դիմակ կրելուց ազատվելու ապացույց: Առողջապահության ոլորտի հետևյալ արտոնագրված մասնագետները կարող են տրամադրել այդպիսի վկայագրեր՝ բժշկական ծառայություններ տրամադրողը, ներառյալ բժիշկը (MD կամ DO), բուժակը (NP) կամ բժշկի օգնականը (PA), որոնք գործում են արտոնագրված բժշկի իրավասության ներքո, և արտոնագրված հոգեկան և վարքային առողջության բժիշկները, այդ թվում՝ Կլինիկական Սոցիալական Աշխատողը (LCSW), Կլինիկական Հոգեբանը (Psy.D.), Մասնագիտացված Կլինիկական Խորհրդատու (LPCC) կամ Ամուսնական և Ընտանեկան Հարցերով Մասնագետը (LMFT):
 - Եթե առաջանում են ախտանիշներ, ապա թեստավորվել FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի վիրուսային թեստով և մնալ տանը: Եթե թեստի արդյունքը դրական է, հետևել «COVID-19-ի՝ տնային մեկուսացման հրահանգներին» (ph.lacounty.gov/covidisolation):
 - Կենտրոնում վարակի հետ շփված աշխատակիցները պետք է հետևեն Cal/OSHA-ի՝ COVID-19-ի Կանխարգելման [Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշներում](#) նշված ցուցումներին: Խնդրում ենք ծանոթանալ Cal/OSHA-ի [COVID-19-ի Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշների՝ հաճախակի տրվող հարցերում](#) ներկայացված գործողություններին, որոնք վերաբերում են COVID-19-ի վարակի հետ շփմանը:
 - Աշխատակիցները կարող են գործատուից պահանջել դիմակներ և շնչառական միջոցներ (respirator), որոնք իրենց համար անվճար են: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [«Կրիր դիմակ և իմացիր քո իրավունքները»](#):
 - Համաձայն Cal/OSHA-ի՝ [COVID-19-ի Կանխարգելման Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշների](#) (ETS)՝ գործատուներից պահանջվում է կատարել հետևյալը անձնակազմի համար. տեղեկացնել բոլոր աշխատակիցներին, թե ինչպես կարող են թեստավորվել, առաջարկել նրանց անվճար թեստավորում և թեստավորում վճարվող ժամերին և թեստավորել այնպես, որ ապահովվի աշխատակիցների գաղտնիությունը: ETS-ի թեստավորման պահանջներին համապատասխանելու համար կարելի է ինչպես ինքնուրույն թեստավորվել COVID-19-ի ազատ վաճառվող (OTC) թեստով, այնպես էլ ինքնուրույն կարդալ դրանց արդյունքները, եթե ներկայացվում են հաստատված արդյունքներ, ինչպիսիք են թեստի արդյունքի լուսանկարը, որի վրա նշված է ժամը և ամսաթիվը, կամ ազատ վաճառվող թեստ, որը թվայնացված տարբերակով արձանագրում է թեստի արդյունքի ժամն ու ամսաթիվը:
- ☐ *Պահանջվում է:* Նախադպրոցական ինսամբի և Կրթական հաստատությունները պետք է ունենան ծրագիր՝ հեշտացնելու COVID-19-ի թեստավորումն այն անձանց համար, որոնք շփվել են վարակի հետ Նախադպրոցական ինսամբի և Կրթության հաստատության տարածքում: Թեստավորվելու դեպքում աշխատակիցները և երեխաները պետք է թեստի արդյունքների մասին տեղեկացնեն Նախադպրոցական ինսամբի և Կրթական հաստատությանը: Թեստավորման ռեսուրսներն ընդգրկում են Նախադպրոցական ինսամբի և Կրթական Հաստատությունների Թեստավորման Ծրագրեր, Աշխատողների Համար Առողջապահական Ծառայություններ կամ Մասնագիտական Առողջապահական Ծառայություններ, Անձնական Առողջապահական Ծառայություններ Մատակարարներողներ, Լոս Անջելես Բաղաքում և Լոս Անջելեսի Շրջանում

Թեստավորման վայրեր՝ covid19.lacounty.gov/testing, ինչպես նաև [Համայնքային Թեստավորման Կենտրոնները](#) (տեղամասային բժշկական կենտրոններ և դեղատներ): Այն անձինք, որոնց անհրաժեշտ է աջակցություն բժշկական ծառայություններ տրամադրող գտնելու հարցում, կարող են զանգահարել Լոս Անջելեսի Շրջանի տեղեկատվական գիծ՝ 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

❑ **Պահանջվում է:** Նախադպրոցական ինամքի և Կրթական հաստատության COVID-19-ի Կապի Անձը պետք է ծանուցի Հանրային Առողջության Վարչությանը դասարանում, սենյակում կամ այլ նախապես սահմանված կամ ճանաչելի խմբում (օրինակ՝ կոհորտ (cohort)) COVID-19-ի 3 կամ ավելի հաստատված դեպքերի բոլոր խմբերի մասին, որոնք 14 օրվա ընթացքում ցանկացած պահի գտնվել են հաստատության տարածքում՝ մինչև հիվանդության առաջնալու օրը: Հիվանդության առաջնալու օրը COVID-19-ի ախտանիշների սկսվելու առաջին օրն է կամ COVID-19-ի թեստավորման օրը՝ որը որ ավելի վաղ է տեղի ունեցել:

- Նախադպրոցական ինամքի կամ Կրթության Հաստատություններում COVID-19-ով վարակման բոլոր խմբակային դեպքերի մասին անհրաժեշտ է հայտնել առցանց անվտանգ հավելվածի՝ Բռնկումների Հայտնաբերման Ընդհանուր Կայքի (SPOT) միջոցով՝ https://spot.cdph.ca.gov/s/?language=en_US: Եթե անհրաժեշտ է հայտնել մի քանի դեպքերի մասին, հաստատությունները կարող են ներկայացնել իրենց հաշվետվությունները՝ օգտագործելով SPOT կայքի «Չանգվածային վերբեռնման ձևանմուշը»: Խմբակային վարակման բոլոր դեպքերի մասին պետք է անհապաղ հայտնել Հանրային Առողջության Վարչությանը և խմբակային վարակման երրորդ կամ վերջին դեպքի մասին ծանուցվելուց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում:

- Նախադպրոցական ինամք կամ Կրթություն տրամադրողները, որոնց անհրաժեշտ է օգնություն COVID-19-ի խմբակային վարակման դեպքերի մասին հայտնելու համար կամ վարակի հետ շփումների կառավարման այլ ուղղորդումների հետ կապված, կարող են զանգահարել Կրթական Հաստատություններում COVID-19-ի Դեպքերի Մասին Հաղորդման Չանգերի Կենտրոն երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 5:00-ը: Նախադպրոցական ինամքի կամ Կրթական Հաստատությունների վարչական աշխատողները, որոնք չունեն Չանգերի Կենտրոնի հեռախոսահամարը, պետք է դիմեն այս հասցեով՝ ACDC-Education@ph.lacounty.gov:

❑ **Պահանջվում է:** Նախադպրոցական ինամք և Կրթություն Տրամադրողը խորհրդակցում է Հանրային Առողջության Վարչության հետ՝ որոշելու՝ արդյոք հաղորդված խմբակային վարակման 3 կամ ավելի դեպքերը համաճարակաբանորեն (Էպիդեմիոլոգիապես) կապված են, այսինքն՝ վարակված անձինք ինչ-որ պահի ներկա են եղել միևնույն վայրում միևնույն ժամանակահատվածում, երբ նրանցից մեկը կամ բոլորը եղել են վարակող*: Վարակված անձանց միջև համաճարակաբանական կապերը որոշելը կարող է պահանջել լրացուցիչ հետազոտություն՝ վարակի հետ շփման պատմությունը գնահատելու և բոլոր հնարավոր վայրերը և այն անձանց հայտնաբերելու համար, որոնք կարող էին հաստատությունում շփվել վարակված անձի (անձանց) հետ նրա(նց) վարակող եղած ժամանակ:

* Վարակված անձը համարվում է վարակող ախտանիշների ի հայտ գալուն նախորդող 2-րդ օրվանից մինչև մեկուսացման ավարտը կամ եթե չկան ախտանիշներ, առաջին դրական արդյունքով թեստը հանձնելու օրվան նախորդող երկրորդ օրվանից մինչև մեկուսացման ավարտը:

- Համաճարակաբանորեն կապված դեպքերը ներառում են՝ միմյանց հետ ճանաչելի կապեր ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ ընդհանուր ֆիզիկական տարածքում (օր.՝ դասարան, Նախադպրոցական ինամքի կամ Կրթական հաստատությունում անցկացվող միջոցառում, սենյակ կամ փոխադրամիջոց) գտնվելը, ինչը ցույց է տալիս այդ միջավայրում հիվանդության փոխկապակցված տարածման, այլ ոչ ավելի լայն համայնքից պատահական

փոխանցման ավելի մեծ հավանականությունը: Եթե կան համաճարակաբանական կապեր, Հանրային Առողջության Վարչությունը կհորդորի Նախադպրոցական Խնամք կամ Կրթություն Տրամադրողին ձեռնարկել կարևոր քայլեր և տեղեկացնել երեխաներին, նրանց ընտանիքներին և աշխատակիցներին Նախազգուշական միջոցառումների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն տեղում՝ հետագա տարածումը կանխելու համար, ներառյալ՝ վարակի վերահսկման համար հատուկ միջամտությունների իրականացումը:

- Հանրային Առողջության Վարչությունը կորոշի՝ արդյոք համաճարակային բնկման չափանիշները բավարարված են: Այսինքն՝ միմյանցից մինչև 14 օր հետո COVID-19-ով վարակման առնվազն 3 հաստատված դեպք սահմանված խմբի* անդամների շրջանում, որոնք համաճարակաբանորեն կապված են, նույն ընտանիքի անդամ չեն և հաստատությունից դուրս սերտ շփում չունեն չունեն իրար հետ:
 - Եթե բնկման չափանիշները բավարարված չեն, Հանրային Առողջության Վարչությունը կհորդորի Նախադպրոցական Խնամք կամ Կրթություն Տրամադրողին շարունակել վարակման կանոնավոր կառավարումը:
 - Եթե բնկման չափանիշները բավարարված են և Հանրային Առողջության Վարչությունը հորդորում է արձագանքել բնկմանը, Հանրային Առողջության Վարչությունը Նախադպրոցական Խնամք կամ Կրթություն Տրամադրողին կտեղեկացնի, որ բնկման քննությունն է սկսվել, և հանրային առողջության քննիչը ուղիղ կապ կհաստատի հաստատության հետ՝ արձագանքը համակարգելու համար:

*Սահմանված խումբը ներառում է այն անձանց, որոնք հաստատությունում ունեն ընդհանուր անդամակցություն (օրինակ՝ դասարան, միջոցառում, փոխադրամիջոց և սենյակ): Համաճարակաբանական կապերը պահանջում են, որ վարակված անձինք վարակող եղած ժամանակ ինչ-որ պահի ներկա գտնվեն միևնույն վայրում նույն ժամանակահատվածում:

**Հավելված Ա. Քայլեր՝ Կառավարելու Նախադպրոցական Իսնամքի և Կրթության
Հաստատությունում COVID-19-ով Վարակված Անձանց Հետ Շփման Դեպքերը**

1 Դեպք	<ol style="list-style-type: none">1) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը կարգադրում է վարակված անձին հետևել Տնային Մեկուսացման Հրահանգներին:2) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը հայտնաբերում է ECE Կենտրոնում վարակակրի հետ սերտ շփում ունեցած անձանց: Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողները կարող են կապ հաստատել Հանրային Առողջության Վարչության հետ՝ սերտ շփում ունեցած անձանց հայտնաբերման հարցում օգնության համար՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ հետևյալ հասցեով՝ ACDC-education@ph.lacounty.gov, կամ զանգահարելով Կրթական Հաստատություններում COVID-19 Դեպքերի Մասին Հաղորդման Չանգերի Կենտրոն:3) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը Նախադպրոցական Իսնամքի և Կրթության Կենտրոնում վարակակրի հետ սերտորեն շփված անձանց (կոնտակտավորներ) տեղեկացնում է վարակի հետ շփման մասին:
2 Դեպք	<ol style="list-style-type: none">1) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը կարգադրում է վարակված անձանց հետևել մեկուսացման հրահանգներին:2) Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը հայտնաբերում է ECE-ում վարակակրի հետ շփում ունեցածներին և նրաց ծանուցում է վարակի հետ շփման (շփումների) մասին:3) <i>Խորհուրդ է տրվում:</i> Եթե երկու դեպքերն առաջացել են 14 օրվա ընթացքում, ապա Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը կարող է խորհրդակցել Հանրային Առողջության Վարչության հետ՝ որոշելու՝ արդյոք դեպքերը համաճարակաբանորեն կապված են: Եթե այդպիսի կապերն առկա են, ապա ECE հաստատությունը կիրառում է վարակի վերահսկման հավելյալ միջոցառումներ: ECE Տրամադրողները կարող են զանգահարել Կրթական Հաստատություններում COVID-19 Դեպքերի Մասին Հաղորդման Չանգերի Կենտրոն կամ ուղարկել էլեկտրոնային նամակ ACDC-Education@ph.lacounty.gov հասցեին՝ որոշելու համար՝ արդյոք դեպքերը համաճարակաբանորեն կապված են:
3+ Դեպք	<ol style="list-style-type: none">1) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը կարգադրում է վարակված անձանց հետևել մեկուսացման հրահանգներին:2) <i>Պահանջվում է:</i> Նախադպրոցական Իսնամք և Կրթություն (ECE) Տրամադրողը հայտնաբերում է ECE-ում վարակակրի հետ շփում ունեցածներին և նրաց ծանուցում է վարակի հետ շփման (շփումների) մասին:3) <i>Պահանջվում է:</i> Եթե դասարանում, սենյակում կամ այլ նախապես սահմանված խմբում (օրինակ՝ խմբավորում) հայտնաբերվում է 3 կամ ավելի դեպքերի խումբ, և դեպքերը 14 օրվա ընթացքում ցանկացած պահի գտնվել են հաստատության տարածքում՝ նախքան հիվանդության սկիզբը, Նախադպրոցական Իսնամք և Կրթություն Տրամադրողն այդ մասին անմիջապես ծանուցում է Հանրային Առողջության Վարչությանը՝ առցանց զեկուցելով հետևյալ հասցեով՝ https://spot.cdph.ca.gov/s/?language=en_US:4) <i>Պահանջվում է:</i> Հանրային Առողջության Վարչությունը (DPH) որոշում է, թե արդյոք բռնկման չափանիշները բավարարվել են: Եթե գործարկվում է DPH-ի քննությունը, հանրային առողջության քննիչը կապ է հաստատում ECE հաստատության հետ՝ համակարգելու բռնկման քննությունը: